Եւայ, նոյն արարիչն Աստուած ուրհնեսցէ դրախտս ձեր, պայգիս և զբուրաստան ձեր. ամէն։ Պատճառ թէ չէն ու պայծառ լինի՝ ձեզ է պարծանք և ճոխութիւն. և թէ աղքատ և նուաստ, դարձեալ ձեզ է պակասութիւն։ Զեզանէ խնդիրք ունիմք, որ զայս աթոռս ի մոաց չի հանէք և անտես չառնէք. և դուք ուրհնեալ լինիք յԱստուծոյ բարձրելոյն. ամէն։

Տ. Կ. Ես յաթոռակալ Մարտիրոս եպիսկոպոս վկա եմ այս բանիս։

Տ. Կ. Ես Համազա եպիսկոպոս առաջնորդ Ս. ուխտին փրկչական պական[1] պատկերին վկայ եմ այս բանիս։

Տ. Կ. Ես Միքայէլ առաջնորդ Ս. ուխտին Աղչկուց վանացն, որ է նահատակ Ս. Ստեփանոս քահանային, վկայ եմ այս բանիս և նամակիս։

Տ. Կ. Ես Մանուէլ եպիսկոպոս առաջնորդ Ս. Աստուածածնին վկայ եմ այս նամակիս։

Տ. Կ. Ես Աստուածատուր եպիսկոպոս առաջնորդ Ս. ուխտիս Արվանաց վկայ եմ այս նամակիս։

Այս հինգ վանաց առաջնորդս առաջի Աստուծոյ և սուրբ աթոռոյս գրանն՝ այս նամակիս համախոհ եմք այս բանիս. որ զՋաքարիա վարդապետն և Դաւիթ եպիսկոպոս՝ հագիւ կարացաք հաւանեցուցանել առ ձեզ գալոյ. այլ մարդոյ հրամանք չկա այդ տեղեացդ նուիրակ կամ իշխանութիւն առնելոյ. գուցանէ ի զատ այլ մարդ չընդունիք. Աստուած ըզձեզ ուրհնէ. Սուտ և խաբեբա մարդ շատ շուրջ գա. բայց ինչ մարդ որ զայս նամակս ու ձեր նշանն առ ձեզ բերէ՝ ըստոյգ և ճշմարիտ նուիրակն նա է։

Գրեցաւ սակաւ գիրս դուռն Ս. Էջմիածնա. Թվին ՌՀԹ, մայիս ամսոյ ի մէկն։

(Ի ստորեւ գրեալ) Ես Ածաք եպիսկոպոս առաջնորդ սուրբ ուխտին Անկուրիոյ տեսի զնամակս և հաւատացի, այս այսպէս է ըստուգ ճշմարիտ։

1. Այսպէս պակաս գրուած, փոխանակ պատուական։